

Հաստատված է

ՆԲԿ -16/2-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2015 թ. <<դեկտեմբերի>> <<17>>-ի թիվ <<2>>որոշմամբ

«Նաիրիի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

**«ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԳՆՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ**

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՆԻԿ-16/2-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի

պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք.Եղվարդ, Չարենցի 196 շենք, տնօրենի ընդունարան հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>> -րդ աշխատանքային օրվա՝ 29.12.2015թ. ժամը <<11:30>>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<29.12.2015թ.>> ժամը <<11:30>>-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@egprocurement.am ,
հեռախոսահամարն է՝ +37410- 244-974:

**ՄԱՍ 1
1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Գնման առարկա է հանդիսանում «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար՝
Դեղորայքի և պարվաստանյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են <<376>> չափաբաժինների՝**

Զ/հ	Չափաբաժինների անվանումները
1.	Կլեմաստին 2մլ
2.	Կլեմաստին 1մգ
3.	Սուպրաստին 25մգ
4.	Սուպրաստին 1մլ
5.	Նիմեսիլ 2գ
6.	Յեմոդեգ 250մլ
7.	Յեմոդեգ 500մլ
8.	Տրամադոլ 50մգ/1մլ
9.	Տրամադոլ 100մգ
10.	Ցինարիզին 25մգ
11.	Մեքսիպրիմ 2.0 մլ
12.	Միդոկալմ 1մլ
13.	Միդոկալմ 150մգ
14.	Օմարոն
15.	ԱՏՖ 10մգ/մլ 1մլ
16.	Ռիբոքսին 2% 5մլ
17.	Ռիբոքսին 200մգ
18.	Պանանզին 10մլ
19.	Պանանզին թաղանթապատ դեղահատեր
20.	Ռանիտիդին 150մգ
21.	Լակտոբացիլուս ռամնոզուս
22.	Սիմետիկոն 66.67մգ/մլ 30մլ
23.	Էսպումիզան 30մլ
24.	Ֆենիստիլ 30մլ
25.	Ստրոֆանտին 0.25% 1մլ
26.	Կատվախոտի ոգեթուրմ 30մլ
27.	Ռիսպերիդոն 2մգ
28.	Կլոզապին 100մգ
29.	Տրիֆլուոպերազին 5մգ
30.	Լիդոկային Էպինեֆրինով 2% 20մլ
31.	Էսֆոլեն 5մլ
32.	Էսենցիալե ֆորտե 300մգ
33.	Կարսիլ 22.5մգ
34.	Ալոխոլ
35.	Պանկրեատին 150 մգ
36.	Պանկրեատին 300 մգ
37.	Մեզիմ ֆորտե 10000 ed
38.	Մեզիմ ֆորտե 3500 ed
39.	Գանգլերոն 2մլ
40.	Վինպոցետին 0.5% 2մլ
41.	Վինպոցետին 5մգ
42.	Պիրացետամ 20% 5մլ

43.	Պիրացետամ 0.4 մգ
44.	Լուցետամ 800մգ
45.	Լուցետամ 20% 5մլ
46.	Ակտովեգին 2մլ 80մգ
47.	Ակտովեգին 5մլ 200մգ
48.	Պենտատրոպ 1% 5մլ
49.	Մագնեզիումի սուլֆատ 25% 5մլ
50.	Նատրիումի թիոսուլֆատ 30% 5մլ
51.	Գլյուկոզ 5% 250մլ
52.	Գլյուկոզ 5% 500մլ
53.	Գլյուկոզ 10% 100մլ
54.	Գլյուկոզ 40% 5մլ
55.	Նատրիումի քլորիդ 0.9% 250մլ
56.	Նատրիումի քլորիդ 0.9% 100մլ
57.	Նատրիումի քլորիդ 0.9% 500մլ
58.	Նատրիումի քլորիդ 0.9% 5մլ
59.	Նատրիումի քլորիդ 0.9% 50մլ
60.	Նատրիումի քլորիդ 0.9% 1000մլ
61.	Նատրիումի բիկարբոնատ 4% 20մլ
62.	Կալիումի քլորիդ 4% 100մլ
63.	Ներարկման ջուր 2 մլ
64.	Ռինգեր 500մլ
65.	Ռինգեր 250մլ
66.	Ռինգեր 1000մլ
67.	Պոլիգլյուկին 250մլ
68.	Ռեոպոլիգլյուկին 250մլ
69.	Ռեոպոլիգլյուկին 500մլ
70.	Մետրոնիդազոլ 0.5% 100մլ
71.	Մետրոնիդազոլ 250մգ
72.	Մետրոնիդազոլ 500մգ
73.	Կլարիթրոմիցին 250մգ
74.	Կլարիթրոմիցին 500մգ
75.	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ 400մգ+80մգ
76.	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ 200մգ+40մգ
77.	ԱՑՑ 200մգ
78.	ԱՑՑ 100մգ
79.	Յեդելիքս 100մլ
80.	Ստոպտուսին ֆիտո 10մլ
81.	Բրոնխոլիտին 125մլ
82.	Տրավիսիլ 100մլ
83.	Ալտե 200մլ
84.	Մելոն 100մգ
85.	Լազոլվան 30մգ
86.	Մուկալտին 0.5գ
87.	Լինկաս 90մլ
88.	Կալցիումի քլորիդ 10% 5մլ
89.	Դիմեդրոլ 1% 1մլ
90.	Օտորալգին 5մլ ականջի կաթիլ
91.	Ֆուրատալգին 5մլ ականջի կաթիլ

92.	Բրոմիդի 100մլ
93.	Բրոմիդի 8մգ
94.	Նազիվին 0.01% 5մլ
95.	Նազիվին 0.025% 5մլ 10մլ
96.	Նազիվին 0.05% 5մլ 10մլ
97.	Սալբուտամոլ 2մգ
98.	Սալբուտամոլ 4մգ
99.	Սալբուտամոլ աերոզոլ 10մլ
100.	Տետրացիկլին 1% 3գ աչքի քունկ
101.	Ալբուցիդ 20% 5մլ
102.	Ակվա մարիս 10մլ
103.	Նիտրոմիտ աերոզոլ 10գ
104.	Անուշադրի սպիրտ 30մլ
105.	Դրոտավերին 2%
106.	Դրոտավերին 40մգ
107.	Էպինեֆրին (Ադրենալին) 0.18% 1մլ
108.	Մեզատոն 1% 1մլ
109.	Ատրոպին 0.1% 1մլ
110.	Տետրակային 0.5% 5մլ
111.	Դեքսամետազոն ակնակաթիլ 0.1% 10 մլ
112.	Տաուֆոն 4%
113.	Հալոպերիդոլ 5մգ
114.	Ֆլուֆենազին 25մգ/մլ 1մլ
115.	Լորազեպամ 2գ
116.	Ապաուրին 2մլ
117.	Դիազեպամ 5մգ
118.	Միդազոլամ 15մգ 3մլ
119.	Տրիհեքսիֆենիդիլ 2մգ
120.	Նակոմ 250մգ+25մգ
121.	Ֆենոբարբիտալ 100մգ
122.	Կարբամազեպին 200մգ
123.	Ցետամոլ 325մգ
124.	Անալգին 50% 2մլ
125.	Մետամիզոլ 0.5գ
126.	Ասկոֆեն 40մգ
127.	Սպազմալգոն 2մլ
128.	Սպազմալգոն 5մլ
129.	Ցետամոլ 150մգ
130.	Ցետամոլ 80մգ
131.	Պարացետամոլ 500մգ
132.	Պարացետամոլ 125մգ/5մլ
133.	Ցեֆեկոն D 0.1գ
134.	Ցեֆեկոն D 0.5գ
135.	Ցեֆեկոն D 0.25գ
136.	Սորֆին 1% 1մլ
137.	Ացետիլսալիցիլաթթու 500մգ
138.	Կատվախոտի հանուկ
139.	Վալերիանայի երեկոյան
140.	Էսկարդ 30մլ

141.	Բարալզետաս 5մլ
142.	Կալզել 10գ
143.	Լիդոկային 2% 2մլ
144.	Էֆեդրին 30մգ/մլ
145.	Լիդոկային 10% 38գ աերոզոլ
146.	Բուպրոպրոկային 0,5% 5մգ/մլ 10մլ
147.	Ֆենտանիլ 0.005% 2մլ
148.	Թեոպենտալ նատրի 0.5գ
149.	Պրոպոֆոլ 20մլ
150.	Էպիկային 0.5% 20մլ
151.	Կետամին 500մգ/10մլ, 10մլ
152.	Իզոֆլուրան 99.9% 100մլ
153.	Հակափայտացման անատոքսին 1մլ
154.	Օձի հակաթույն
155.	Տամոքսիֆեն 10մգ
156.	Ստրեպտոմիցին 1գ
157.	Հակակատաղության պատվաստանյութ
158.	Ֆլուկնոնազոլ 150մգ
159.	Ֆլուկնոնազոլ 50մգ
160.	Ացիկլովիր 200մգ
161.	Նիտրոքսոլին 0.5մգ
162.	Ֆուրադոնին 50մգ
163.	Սուլֆոկամֆոկային 2մլ
164.	Գենտամիցին 80մգ 2մլ
165.	Նովոկային 0.5% 5մլ
166.	Նովոկային 2% 2մլ
167.	Նովոկային 0.5% 250մլ
168.	Ազիթրոմիցին 250մգ
169.	Ամօքսիցիլին + ըլավուլանաթթու 625մգ տարալուծվող դեղահատեր կախույթ ստանալու համար
170.	Ամօքսիցիլին 250մգ
171.	Ամօքսիցիլին 500մգ
172.	Ցեֆտրաքսիմ 1գ
173.	Ցեֆոտաքսիմ 1գ
174.	Ցեֆազոլին 1.0գ
175.	Ցեֆազոլին 0.5գ
176.	Ցիպրոֆլօքսացիլին 250մգ
177.	Ցիպրոֆլօքսացիլին 2մգ/մլ 200մլ
178.	Ցիպրոֆլօքսացիլին ակնակաթիլ 0.3%
179.	Դոքսացիլին 0.1
180.	Նիտրոֆուրանտոյին 100մգ
181.	Լևոֆլօքսացին 500մգ
182.	Անեսթեզիկ քունկ 5% 30մգ
183.	Պրոկային Բենզիլպենիցիլին 1գ
184.	Բենզիլպենիցիլին 1.2մլն ՍՍ
185.	Ամօքսիցիլին 250/5մլ
186.	Լևոմիկոլ քունկ
187.	Ալոե 1մլ
188.	Ամոքսիկլավ 156.25մգ/5մլ 100մլ

189.	Ամոքսիկլավ 312/5մլ 100մլ
190.	Ամպիցիլլին 0.5գ
191.	Պանթենոլ ցողացիր 58գ
192.	Ամպիցիլլին 1գ
193.	Ռիվանոլ 0.1գ
194.	Պրեդնիզոլոն 5մգ
195.	Պրեդնիզոլոն 5մգ/1մլ
196.	Հիդրոկորտիզոն 100մգ
197.	Դեքսամետազոն 4մգ 1մլ
198.	Դիֆենհիդրամին 100մգ
199.	Լորատադին 10մգ
200.	Միզոպրոստոլ 25մկգ
201.	Օքսիտոցին 1մլ
202.	Գինիպրալ 0.5գ
203.	Դրապոլեն 55գ
204.	Ինդոմետացին 25մգ
205.	Ինդոմետացին քունկ 10% 40գ
206.	Դիկլոն մոմիկ 100մգ
207.	Ինդոլազին 45գ գել
208.	Քլորիտեքսիդին 0.5%
209.	Պերիդոլ 33%
210.	Վիշնևսկի քունկ 30գ
211.	Նիստատին քունկ 15գ
212.	Բենզիլ բենզոատ քունկ 25%
213.	Սալիցիլաթթու 1%
214.	Միկոնազոլ նրբաքունկ 2%
215.	Բետամեթազոն նրբաքունկ 0.1%
216.	Դիկլոֆենակ 75/3մլ
217.	Ատրակուրիում 10մգ/մլ, 2,5մլ
218.	Դիթիլին 2% 5մլ
219.	Արդուան 4մգ 2մլ
220.	Դիկլոֆենակ 50մգ
221.	Դիկլոֆենակ 100մգ
222.	Կետոպրոֆեն 200մգ
223.	Դեքսալգին 50մգ/2մլ
224.	Դեքսալգին 25մգ
225.	Կետոնալ 2մլ
226.	Կետորոլակ 100մգ /մոմիկ/
227.	Իբուպրոֆեն 0.2գ
228.	Իբուպրոֆեն Մեդանա 100մգ/5մլ 120մլ
229.	Իբուպրոֆեն 400մգ
230.	Կոդեին 30մգ
231.	Ադամանոյա կանաչ 1% 15մլ
232.	Յոդի 5% սպիրտային լուծույթ 15մլ
233.	Ռեհիդրոնի լուծույթ 330մլ
234.	Պերեկիս 3% 100մլ/ջրածնի պերօքսիդի լ/թ
235.	Բետադին 10%
236.	Սպիրտ 96%
237.	Նիստատին 500000 ed

238.	Կարդիկետ ռետարդ 20մգ
239.	Դիակարբ 250մգ
240.	Սպիրոնոլակտոն 25մգ
241.	Դիգօքսին 0.25 մգ
242.	L-թիրոքսին 100մգ
243.	L-թիրոքսին 50 մկգ
244.	Թիամազոլ 5մգ
245.	Մեթիպրեդ 4մգ
246.	Պրոզերին 0.05% 1մլ
247.	Էնալապրիլ H 10մգ
248.	Էնալապրիլ 10մգ
249.	Էնալապրիլ 5մգ
250.	Ամլոդիպին 5մգ
251.	Ամլոդիպին 10մգ
252.	Դոպամին 5մլ 40մգ
253.	Ֆինոպտին 2.5մլ
254.	Ֆինոպտին 40մգ
255.	Վերապամիլ 40մգ
256.	Վերապամիլ 80մգ
257.	Բիսոպրոլոլ 5մգ
258.	Բիսոպրոլոլ 2.5մգ
259.	Բիսոպրոլոլ 10մգ
260.	Պերինդոպրիլ 5մգ
261.	Պերինդոպրիլ 10մգ
262.	Պերինդոպրիլ 4մգ
263.	Նիֆիդիպին 10մգ
264.	Ատենոլոլ 50մգ
265.	Ատենոլոլ 100մգ
266.	Անապրիլին 10մգ
267.	Անապրիլին 40մգ
268.	Մետոպրոլոլ 25մգ
269.	Մետոպրոլոլ 100մգ
270.	Մետոպրոլոլ 50մգ
271.	Կարվեդիլոլ 6.25մգ
272.	Կարվեդիլոլ 25մգ
273.	Ֆուրոսեմիդ 40մգ
274.	Ֆուրոսեմիդ 1% 2մլ
275.	Ինդապամիդ 1.5 մգ
276.	Ինդապամիդ 2.5 մգ
277.	Պապավերին 2% 2մլ
278.	Օմնոպոն 2% 1մլ
279.	Պապավերին մոմիկ 0.2գ
280.	Կապտոպրիլ 25մգ
281.	Կապտոպրիլ 50մգ
282.	Հիդրոքլորթիազիդ 25մգ
283.	Մեթիլդոպա 250մգ
284.	Լիզինոպրիլ 10մգ
285.	Լիզինոպրիլ 5մգ
286.	Կորաքսան 7.5մգ

287.	Դիբազոլ 1% 1մլ
288.	Դիբազոլ 1% 5մլ
289.	Ատորվաստատին 10մգ
290.	Ատորվաստատին 40մգ
291.	Սիմվաստատին 10մգ
292.	Ամիոդարոն 50մգ/մլ
293.	Ամիոդարոն 200մգ
294.	Կորդարոն 150մգ
295.	Գլիցերիլ եռնիտրատ 0.5մգ(ենթալեզվային)
296.	Կոֆեին բենզոատ 10% 1մլ
297.	Գլիցին 0.1գ
298.	Ցիանկոբալամին 500մկգ/մլ
299.	Կորդիամին 25% 2մլ
300.	Տրիմետազոլին MR 35մգ
301.	Կորվալդին 20մլ
302.	Կորվալոլ 25մլ
303.	Վալիդոլ 0.1գ
304.	Վալիդոլ 0.06գ
305.	Երկաթի ադ+ֆոլաթթու 50մգ+0.5մգ
306.	Ֆոլաթթու 1մգ
307.	Ֆոլաթթու 5մգ
308.	Երկաթ պարունակող համակցություն 50մգ/մլ 30մլ
309.	Ամինոկապրոնաթթու 5% 100մլ
310.	Ամինոկապրոնաթթու 250մլ
311.	Դիցլինոն 250մգ/2մլ
312.	Ֆենիլին 0.03գ
313.	Վարֆարին 5մգ
314.	Վարֆարին 2մգ
315.	Չեպարին 5մլ
316.	Չեպարին 25գ քսուկ
317.	Էնոքսապարին 4000ME/0.4մլ
318.	Կարդիոմագնիլ 150մգ
319.	Կարդիոմագնիլ 75մգ
320.	Ասպիրին կարդիո 100մգ
321.	Ացետիլսալիցիլաթթու 75մգ (պատված աղելուծ թաղանթով, վարդագույն)
322.	Ացետիլսալիցիլաթթու 150մգ (պատված աղելուծ թաղանթով, վարդագույն)
323.	Ֆրաքսիպարին 0.3մլ
324.	Կլոպիդոգրել 75մգ
325.	Ֆերում լեկ 2մլ
326.	Ֆերում լեկ 5մլ
327.	Կոկարբոքսիլազա 50մգ/2մլ
328.	Վիտամին K Կոնակինոն 2մգ 2մլ
329.	Գլիցերին 1գ
330.	Սենադեքսին (աճալ)
331.	Պլատիֆիլին 0.2% 1մլ
332.	Մետոկլոպրամիդ 2մլ
333.	Էուֆիլին 2.4% 5մլ
334.	Ամինոֆիլին 150մգ

335.	Կալցի գլյուկոնատ 10% 5մլ
336.	Կալցի գլյուկոնատ 0.5գ
337.	Վիտամին B համալիր 2մլ
338.	Վիտամին B համալիր
339.	ԿալցեՆոլա
340.	Պիկովիտ պլյուս
341.	Վիտրում բեյբի 2-5 տարեկան
342.	Վիտրում քիոս 4-7 տարեկան
343.	Վիտրում+կալցիում+վիտամին D3
344.	Պիկովիտ օշարակ 150մլ
345.	Ակվադետրիմ ջրային լուծույթ
346.	Կալցեմին
347.	Պիրիդոքսին 5%
348.	Նիկոտինաթու 1մլ
349.	Նիկոտինաթու 50մգ
350.	Թիամին 5%
351.	Ասկորբինաթու 100մգ/մլ կաթիլ 10մլ
352.	Ասկորուտին 50մգ
353.	Ասկորբինաթու 100մգ/մլ կաթիլ 30մլ
354.	Ասկորբինաթու 5% 5մլ
355.	Ասկորբինաթու 5% 2մլ
356.	Ասկորբինաթու 1000մգ
357.	Գլիբենկլամիդ 5մգ
358.	Գլիկլազիդ 30մգ
359.	Մեթֆորմին 500մգ
360.	Ակտիվացված ածուխ 0.25գ
361.	Ալբենդազոլ 400մգ
362.	Մեբենդազոլ 100մգ
363.	Պիրանտել 250մգ
364.	Լոպերամիդ 2մգ
365.	Պանկրիատին 300մգ
366.	Նիկոշպան
367.	Պանկրիատին 125մգ
368.	Մետոկլոպրամիդ 10մգ
369.	Նարինե 150մգ
370.	Լաքսալակ 100մլ
371.	Նևիգրամոն 500մգ
372.	Լինեքս
373.	Սմեկտա 3.0
374.	Օմեպրազոլ 20մգ
375.	Ֆամոտիդին 20մգ
376.	Զլորամին Բ 0.3կգ

Դեղորայքի և պատվաստանյութերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում Դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարումը¹:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը²:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

¹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

² Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին:

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելու է նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.³

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում :

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

³ Եթե գնման առարկայի նմանարկի խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա՝ 29.12.2015թ., ժամը <<11:30>>-ն, «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք.Եղվարդ, Չարենցի 196 շենք տնօրենի ընդունարան հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Էդվարդ Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ե. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁴:

զ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

է. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<11:30>>-ին, «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ ք.Եղվարդ, Չարենցի 196 շենք տնօրենի ընդունարան հասցեում:

⁴ Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին

նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի «<q>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու

դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին⁵:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

⁵ Եթե գնման առարկայի նմանաբանի խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և հրավերով <<տեխնիկական միջոցներ>> կամ <<աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշների մասով սահմանված չեն համապատասխան պահանջներ, ապա սույն բաժնի 8.1.1-8.1.3 կետերը հրավերից հանվում են:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում <<5>> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրի նախագիծում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

9.3 Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Ընդ որում, Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է Մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

